ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ
THE WORLD BANK

Համաշխարհային բանկը (ՀԲ) հիմնադրվել է 1944 թթվականին՝ Բրետոն Վուդսի համաժողովի ընթացքում: ՀԲ-ի հիմնական նպատակներն են՝ մինչև 2030թ. կրճատել ծայրահեղ աղքատությունը և նպաստել երկրների ընդհանուր բարգավաճմանն ու բարեկեցությանը: Բանկի խումբը բաղկացած է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (IBRD), Միջազգային զարգացման ընկերակցությունից (IDA), Միջազգային ֆինանսական կորպորացիայից (IFC), Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալությունից (MIGA) և Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնից (ICSID):

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է Համաշխարհային բանկին 1992թ. ապրիլի 28-ից: Բանկի կողմից տրամադրված վարկերը, փոխառությունները, ինչպես նաև դրամաշնորհները ներգրավվել են տնտեսության տարբեր ոլորտներում (էներգետիկա, ճանապարհաշինություն, կրթություն, գյուղատնտեսություն, ոռոգման համակարգեր, սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և պետական կառավարման համակարգի բարեփոխումներ) նպատակային ներդրումային ծրագրերի և անմիջականորեն պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման նպատակով:

Համաշխարհային բանկի ընդհանուր կապիտալում Հայաստանի Հանրապետությունը բաժանորդագրվել է 2,379 բաժնեմասի, որը կազմում է ընդհանուր ձայների 0.07%-ը:

1993-2020թթ. ՀՀ կառավարությունում ՀԲ-ի ընդհանուր պորտֆելը կազմում է 2.364. մլրդ. ԱՄՆ դոլար:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասությանն առնչվող ընթացիկ ծրագրերն են.

- Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր
- Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների ծրագիր

- Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր
- Գյուղատնտեսական քաղաքականության մոնիտորինգի և գնահատման կարողությունների ծրագիր